ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊԻ ՏՈՆԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(ապրիլի 5, 2025 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եթէ ոք կամի զկնի Իմ գալ, ուրացի՛ զանձն
եւ առցէ զխաչ իւր եւ եկեսցէ զկնի Իմ»
(Մատթ. ԺԶ. 24)։

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Այսօր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է մեր հավատքի եւ Եկեղեցու պատմության համար կարեւորագույն նշանակություն ունեցող տոներից մեկը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի «Մուտն ի վիրապը»։ Այս տոնը մեզ համար լոկ պատմական իրադարձություն չէ, այլ խոսուն վկայությունն է այն ճշմարտության, որ Աստծու ներգործությունն ի զորու է փոխել մարդկային կյանքերն ու պատմությունը։ Այսօր, մեր հավատքի հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի հոգեւոր փորձառության միջոցով հաղորդ ենք դառնում, հայ ազգի մեջ տիրավանդ պատգամի կենսագործմանը. «Եթե մեկը կամենում է հետեւել Ինձ, թո՛ղ ուրանա իր անձը, վերցնի իր խաչը եւ գա Իմ հետեւից» (Մատթ. ԺԶ. 24)։ Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի այս խոսքը յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի համար հնչում է որպես կյանքի հոգեւոր աճի ուղենիշ։ Դա մի ճանապարհ է, որը պահանջում է հետեւողականություն հավատքի հարցերում, անձնազոհություն եւ հավատարմություն՝ հոգեւոր ճամփորդության բոլոր հանգրվաններում։ Ասվածն ամբողջացնում է Պողոս առաքյալի միտքը. «Քրիստոսի հետ խաչվեցի, եւ այլեւս ես չեմ ապրում, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ» (Հմմտ. Գաղ. Բ. 20)։

Սիրելինե՛ր, մեր բազմերախտ հայրապետի կյանքը կենդանի վկայությունն է այն ճշմարտության, որ երբ մարդը հավատարիմ է մնում Աստ-

ծուն եւ հնազանդվում նրա կամքին, Աստված բազմապատկում է նրա շնորհները եւ զորացնում հաղթահարելու ցանկացած դժվարություն։

Լուսավորիչ Հայրապետը ծնվել էր մի ընտանիքում, որի պատմությունը, ըստ Ագաթանգեղոս պատմիչի Հայոց պետության դեմ իրականացրած դավադրության եւ անհավատարմության հետ էր աղերսվում։ Նրա հայրը՝ Անակ Պարթեւը, Պարսից շահի դրդմամբ կյանքից զրկել էր Հայոց Խոսրով արքային։ Դավադրության հետեւանքով Անակի ողջ գերդաստանը սրի քաշվեց, սակայն Աստծու նախախնամությամբ մանուկ Գրիգորը փրկվեց եւ հասակ առավ Կեսարիայում՝ դաստիարակվելով քրիստոնեական հավատքով։ Այստեղից է սկսվում նրա հոգեւոր ճանապարհը, որն անցնում էր բարդ փորձությունների միջով։

Խոսրովի որդին՝ Տրդատ արքան, նույն ժամանակ գտնվելով Հռոմում, հմտանում էր ռազմարվեստում եւ առանձնանում մասնավոր խիզախությամբ։ Ի վերջո՝ նա ստանձնում է Մեծ Հայքի թագավորական գահը։ Շուտով, հռոմեական զորքի աջակցությամբ, նա վերադառնում է Հայոց երկիր՝ ազատելու իր ժողովրդին պարսկական լծի տառապանքից։ Գրիգորը, տեղյակ լինելով իր հոր գործած մեղքի մասին, որոշում է իր կյանքը նվիրել Աստծուն եւ ծառայել Հայոց արքային՝ որպես քավություն հայրական մեղքի։ Հայոց արքան, իր հաղթանակի տոնի առթիվ, հրամայում է զոհեր մատուցել հեթանոս չաստվածներին, սակայն Սուրբ Գրիգորը, հավատարիմ մնալով իր քրիստոնեական կոչմանը, մերժում է զոհ մատուցել։ Իսկ Տրդատ արքան իմանալով, որ Գրիգորն արքայասպան Անակի որդին է եւ Քրիստոսի ջերմեռանդ հետեւորդը, բարկանում եւ ավելի մեծ ուժով ու սաստիկ տանջանքներով փորձում է սրբին պարտադրել հրաժարվել քրիստոնեությունից։ Բայց Գրիգորը հաստատակամ է մնում իր հավատքի մեջ եւ շարունակում է արքայի առջեւ համարձակորեն խոստովանել Քրիստոսին որպես կյանքի Տեր եւ Առաջնորդ։ Տրդատ արքան, տեսնելով Գրիգորի հաստատակամությունը, անսակարկ եւ անվերապահ հավատը, հրամայում է ձերբակալել նրան։ Նա դատապարտվում է մահապատժի եւ նետվում է Արտաշատի բանտի խոր վիրապ, որտեղ Հայոց ավանդության համաձայն՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի միակ այցելուն Աստծու հրեշտակն էր եւ գաղտնի կերպով նրան մեկական նկանակ բերող այրին։ Գրիգորը գուբի մեջ տասներեք տարի մնում է միայնակ, զրկված արեւի լույսից եւ մարդկային շփումից։ Բայց նույնիսկ այդ սարսափելի պայմաններ-

րում նա չի սասանվում իր հավատքի մեջ, հավատարիմ է մնում ամենակալ Աստծուն, որովհետեւ նրա համար ավետարանի աստվածախոս ճշմարտությունները «Եթե մեկը կամենում է հետեւել Ինձ, թո՛ղ ուրանա իր անձը, վերցնի իր խաչը եւ գա Իմ հետեւից» (Մատթ. ԺԶ. 24) այլեւս դարձել էին կենսակերպ։ Պողոս առաքյալն ասում է, որ Համբերությամբ պետք է ընթանանք մեր կյանքի ուղիով, որպես օրինակ ունենալով Հիսուսին՝ մեր հավատի զորագլխին եւ կատարելագործողին» (Համմտ. Եբր. ԺԲ. 1–2)։

Սիրելի՛ հավատացյալներ, Տերը մեզ պատվիրում է, որ Իր հետեւից գնալու համար պետք է ուրանանք մեր անձերը, վերցնենք մեր խաչը եւ հետեւենք Իրեն։ Հետեւաբար խիստ անհրաժեշտ է հրաժարվել անձնական փառասիրությունից, եսասիրությունից եւ աշխարհիկ, մոլորեցնող ցանկություններից՝ ընդունելով փրկագործության շնորհը մեր կյանքում։ Ընդհանրական Եկեղեցու մեծագույն հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերանը հորդորում է. «Խաչը մեր փրկության աղբյուրն է, մեր հույսը, մեր լույսը եւ մեր զորությունը»։ Մեր բազմաչարչար հայրապետն անգամ նայելով մահվան աչքերի մեջ, չուրացավ իր խաչը եւ հավատարմորեն քայլեց խաչի ճանապարհով։ Այսօր եւս յուրաքանչյուր քրիստոնյա կանգնած է ընտրության առջեւ. հետեւե՞լ Քրիստոսին՝ հաղթահարելով դժվարություններն ու նեղությունները, թե՞ մեր անձերը վեր գնահատելով ամեն ինչից՝ ընտրել Աստծուց օտարված մի կյանք։ Եկեղեցու հայրերը պատգամում են. «Քրիստոսի հետեւորդ լինել նշանակում է քայլել այն ճանապարհով, որով Նա քայլեց՝ խոնարհությամբ եւ սիրով»։

Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատմությունն անքակտելիորեն կապված է նաեւ Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հետ, որ մեծ խիզախությամբ մերժեցին այս աշխարհի փառքը՝ ընտրելով հավատարիմ մնալ Քրիստոսին։ Նրանց զոհողությունը դարձավ այն հոգեւոր սերմը, որից ծագեց հայ ազգի քրիստոնեական ինքնությունը։

Լինել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու անդամ՝ նշանակում է ընդունել խաչի կենսաբեր ճանապարհը եւ քայլել այդ ճանապարհով, որով քայլեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետը եւ կյանք պարգեւեց մի ողջ ազգի։ Մեր հայրերն էլ հավատարիմ մնալով այդ ճանապարհին՝ չվախեցան հալածանքներից, որովհետեւ հավատացին խաչի կենսատու զորությանը։ Խաչը մեր ուխտն է, մեր ինքնության կնիքը եւ մեր հավատքի վառ վկայությունը։

Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրինակով մենք եւս կանչված ենք հավատարիմ մնալու մեր քրիստոնեական ուխտին՝ անկախ դժվարություններից։ Երբ վերցնում ենք մեր խաչը, մենք մեր կյանքում տեղ ենք տալիս Քրիստոսի սիրուն, եւ այդ սերն է, որ փոխակերպում է մեզ՝ դարձնելով լույսի ու հույսի վկաներ։

Սիրելինե՛ր, այս Սուրբ Տաճարը, որի Միածնաէջ Սուրբ Սեղանի շուրջ այսօր ամենքս համախմբվել ենք՝ իբրեւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի հետեւորդներ եւ հավատակիցներ, կառուցվել է Առաքելապատիվ Հայրապետի տեսիլքի համաձայն։ Քաջ հայտնի է ամենքիս, որ այն ի սկզբանե եղել է հայ ազգի Սրբություն սրբոցը, հայ ազգի բարեխոսը, մշտապես հայ ազգը իր ապագան կերտել եւ կարողացել է հասնել 21-րդ դար միայն ու միայն այս Սուրբ Տաճարից հնչող եւ կյանքի ճանապարհ ուղենշող մարգարեական եւ աստվածային խոսքերի շնորհիվ։ Ամենքս ապրում ենք անասելի երջանկություն, քանզի նորից իր նորոգյալ դռներն է բացում եւ մեզ իր գիրկն է առնում Հայոց փրկության տապանը։ Իսկ այս ամենի համար կցանկանայի, առաջին հերթին որպես հայ եւ ապա որպես հոգեւորական իմ որդիական երախտագիտությունը հայտնել Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետին, ում նախանձախնդիր ջանքերի շնորհիվ հիմնանորոգվեց այս Սուրբ Տաճարը, որպեսզի շարունակի համախմբել, ազգային եւ հոգեւոր արժեքներով սնուցանել եւ առաջնորդել իր զավակներին դեպի հավիտենություն։

Սիրելինե՛ր, քայլենք խաչի լույսի ներքո, լինենք հավատարիմ մեր ուխտին, մեր հայրերի ուղենշած ճանապարհին եւ մեր կյանքով փաստենք, որ իրապես Սուրբ Գրիգոր Լուսավորչի նույն հավատքի կրողներն ու վկաներն ենք։ Թո՛ղ Սուրբ Հայրապետի բարեխոսությունը զորություն տա մեզ՝ հավատարիմ մնալու մեր հավատքին եւ առ Աստված մեր ընթացքը հավատարմությամբ եւ վստահությամբ շարունակելու։ Եւ թո՛ղ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ խաղաղությունը ամենքիս հետ լինեն՝ այսօր, վաղը եւ հավիտյանս հավիտենից. Ամեն։